ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Ազգային արժեհամակարգը կրող քաղաքացու ձևավորումը պատմության դասաժամերին

ԱՌԱՐԿԱ	Պատմություն
ՀԵՂԻՆԱԿ	Ամալյա Դալլաքյան
ՄԱՐԶ	Լոռու մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ախթալայի N 1 միջնակարգ դպրոց
ՂԵԿԱՎԱՐ	Գ. Էմինյան

Բովանդակություն

Ներածություն 2
Գլուխ 1
1. Ազգային արժեհամակարգի ձևավորումը պատմության դասաժամերին . . . 4
2. Պատմության դասավանդման համար առաջարկվող մեթոդներ, հնարներ և վարժություններ 9
Եզրակացություն 13
Գրականության ցանկ 15

Որքան մոռացկոտ,այնքան տկար ու դժբախտ է ժողովուրդը:Մոռացա՞վ իր պատմությունը,ասել է՝անխրատ է ժողովուրդը և պատժի արժանի:

Գ.Նժդեհ

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Հայոց պատմությունը բոլոր ժամանակներում մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդին կյանքին,գիտությանը,հասարակական մտքերին ու մշակույթին:

Ամեն մի ժողուվուրդ ունի իր պատմությունը , որի միջոցով ուսումնասիրում է անցյալը՝ ապագան ճիշտ կառուցելու ցանկությամբ: Անցյալի չիմացությունն անխուսափելիորեն հանգեցնում է ներկան չհասկանալուն: Պատմության միջոցով են ազգերը ծանոթանում իրենց պատմության, մշակույթին և դրա շնորհիվ ձևավորում են ազգային արժեհամակարգ: Յուրաքանչյուր ազգ ունի իր ինքնատիպությունը, ազգային դիմագիծը , որը արտահայտվում է ազգային արժեհամակարգի միջոցով:

Հայոց ազգային արժեհամակարգի հիմնարար արժեքներն են՝ ազգը՝ որպես հավաքական ամբողջություն, հայրենիքը՝ որպես ազգի սեփական ընդհանուր կենսատարածք, լեզուն՝ որպես հայ ինքնության երաշխավոր,հավատը՝ որպես ընդհանուր հոգևոր հայրենիք,միսնական մշակույթը, պետականությունը և հասարակական համերաշխության սկզբունքները՝ բարոյականության, ազատության և արդարության վերաբերյալ նրա պատկերացումները:

Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է Հայաստանի Հանրապետության պետական չափորշչով:

Ազգային արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական

ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակույթային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Թեմայի ուսումնասիրման նպատակը:

Բացահայտել և հիմնավորել սովորողի ազգային արժեհամակարգի, հայրենասիրության ձևավորման գործում հայոց պատմություն առարկայի դերը:

Թեմայի ուսումնասիրման խնդիրները:

.Ներկայացնել ազգային արժեհամակարգի էությունը:

.Ուսումնասիրել ազգային արժեհմակարգի տեղը և դիրքը հայոց պատմության դասաժամերին:

Աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտական աշխատանքը կազմված է ներածությունից, մեկ գլխից, որը համապատասխանաբար բաժանվում է երկու բաժինների, եզրակացությունից և գրականության ցանկից: Առաջին բաժինը «Ազգային արժեհամակարգ», երկրորդ բաժինը «Պատմության դասավանդման համար առաջարկվող մեթոդներ,

հնարներ և վարժություններ»:

Արժեքային արժեհամակարգի ձևավորումը պատմության դասին

Դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկա կարևոր է, որովհետև յուրաքանչյուրն ունի իր դասավանդման նպատակները և խնդիրները: Բոլորի նպատակը մեկն է՝ աշակերտներին տալ, այնպիսի գիտելիքներ, որոնք արժեքավոր կլինեն իրենց կյանքում: Պատմության տարբեր մեթոդական գրականություններում նեկայացվում է, որ դպրոց ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է որոշակի արժեքներ ունենա: Ա. Սարգսյանը անդրադառնալով այս թեմային նշում է, որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

« 1. Լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին

2. Ունենա ազգային գիտակցություն

3. Կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,

4.Ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,

5. Գիտակցի ներկա և ապագա կերտելու խնդրում ազգային պատմության դերը,

6. Գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները , աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն... »{ 3,20}

Այս ամենին հասնելու համար անհրաժեշտ է պատամության դասաժամերին ուշադրություն դարձնել ազգային արժեհամակարգին:

Հայոց պատմության դասընթացի ուսուցման ձևերը բազմազան են , սակայն հիմնական ձևը մնում է դասը: Դասը սովորողների հաստատուն կազմի հետ տարվող և որոշակի ժամաքանակով սափանափակված ուսումնադաստիրակչական աշխատանքի հիմնական օղակն է: Սակայն դասը չի բացառում ուսուցման այլ ձևերի՝ դասախոսությունների,սեմինարների,գործնական պարապունքների, և ուսումնական բանավեճերի, հարցազրույցների և էքսկուրսիաների կազմակերպումը: Այսինքն դասը դառնում է ուսուցչի ստեղծագործական աշխատանքը, որի մասնակիցները դառնում են աշակերտները:

Պատմության դասը կառուցվում է պռոբլեմային-ժամանակագրական սկզբունքով:Ժամանակի յուրաքանչյուր հատվածի դեպքերն ու երևույթները ներկայացվում են միասնության մեջ: Այս դեպքում մենք գործ ունենք պատմության դասերի մի շարք համակարգերի հետ , որտեղ առավելապես քննարկում են .

ա. հասարակության տնտեսական կյանքի հարցերը դարձյալ իրար հաջորդաբար փոխարինող պատմական դարաշրջաններով,

բ. հասարակության սոցիալ-քաղաքական կյանքի հարցերը դարձյալ իրար հաջորդաբար փոխարինող պատմական դարաշրջաններում,

գ. պատմական դարաշրջանների պատմամշակույթային բովանդակությունը:

Այս համակարգերից յուրաքանչյուրը բաղկացած է որոշակի քանակությամբ դասերից , որոնք հաճախ իրարից տարբերվում են ժամանակի մեծ տևողությամբ: Դրա համար ուսուցիչը պետք է կարողանա ճիշտ որոշել յուրաքանչյուր դասի տեղը ոչ միայն տվյալ թեմայում, այլ մեծ բաժիններում և ողջ դասընթացում: Այսպես «Կիլիկյան Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքը դասին» այդ նյութի ուսուցումից առաջ ուսուցիչը պետք է կազմակերպի ընդհանուր քննարկում ավելի վաղ անցած «Բագրատունյաց Հայաստանի հասարակական-տնտեսական կյանքը» թեմայի շուրջը , նպատակ ունենալով սովորողների հիշողության մեջ վերականգնել հողատիրության , նրա առանձնահատ-կությունների, տնտեսության ճյուղերի, քաղաքների զարգացման վիճակի մասին գիտելիքները, որոնք հիմք պետք է դառնան 11-14-րդ դարերում տնտեսական կյանքի զարգացման նոր հիմնախնդիրների յուրացման համար:

Հայոց պատմության դասերի տիպավորման վերաբերյալ մեթոդական գրականության մեջ առանձնացնում են դասի տարբեր տիպեր: Ա. Գյուլբուդաղյանը անդրադառնալով այս թեմային , առանձնացնում է դասի հետևյալ տիպերը՝

«ա համակցված դաս

բ նոր նյութի ուսումնասիրման դաս,

գ նոր նյութի քննարկման դաս,

դ գիտելիքների կիրառման և կարողությունների ու հմտությունների ձևավորման դաս

ե գիտելիքների,կարողություններիև հմտությունների ամփոփիչ կրկնության և ընդհանրացման դաս,

զ գիտելիքների,կարողությունների և հմտությունների ամփոփիչ գնահատման դաս:»{4,17}

Կան պատմության դասերի դասակարգման նաև այլ տարբերակներ:Դասի կարևորագույն մասերից մեկը դասի նպատակի որոշումն է , սովորողներին դասի նպատակների, խնդիրների հայտնում, նոր նյութի ամրապնդումը,գնահատումը անդրադարձը, ամփոփումը, տնային առաջադրանքը և այլ: Պատմության դասի կառուցվածքը միատեսակ չէ և կարող է փոփոխվել: Ուսուցիչը դասարան մտնելուց առաջ պետք է ունենա դասի կառուցվածքը , որը կախված պետք լինի դասի նպատակից , խնդիրներից , մեթոդներից և ուսուցչի մանկավարժական վարպետությունից:

Պատմության դասատիպերի շարքում կարևորվում են գիտելիքների , կարողությունների և հմտությունների գնահատման դասերը: Գնահատումը իրականացվում է գրեթե բոլոր դասերին ՝ ուսուցման գործընթացի տարբեր փուլերում: Յուրաքանրյուր փուլում գնահատումը միատեսակ չէ : Գնահատումը կարող է լինել նաև ոչ միավորային:

Գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման դասին բնորոշ են տարբեր կառուցվածքային փուլերը: Ա.Ղուկասյանը անդրադառնալով գնահատման դասին բնորոշ կառուցվածքային փուլերին գրում է .

«ա գիտելիքների կրկնություն, գնահատում և հաշվառում բանավոր հարցման մեթոդներով՝ ընկերների պատասխանների ուղղում,լրացում և գրախոսում, ընդհանուր զրույց,հարցում՝ գրատախտակին դասարանի կողմից կազմված պլանով ,թեմատիկ և ժամանակագրական աղյուսակներով ու սխեմաներով,

բ.սովորողների ձեռք բերված հիմնական հասկացությունների էությունը բացահայտելու և սեփական մտքերը պնդելու համար առավել համոզիչ փաստարկներ բերելու կարողության ու հմտության գնահատում,

գ. սովորողների տեսական գիտելիքների իմաստավորման գնահատում,

դ. գիտելիքների կիրառում սովորական պայմաններում պատրաստի նյութի վրա,

ե.գիտելիքների կիրառումը ոչ ավանդական ,փոփոխված պայմաններում:»{ 4,22}

Հայոց պատմության առարկայի ուսուցման գլխավոր նպատակը ազգային արժեհամակարգով դաստիարակված քաղաքացու ձևավորումն է և ազգային արժեքներով աշակերտներին զինելը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիրակչական մի շարք կարևոր խնդիրներ:Այս խնդիրներին անդրադարձել է Ա.Նազարյանը,որը գրում է.

«1. Սովորողներին զինել հին, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջոցով կարմիր թելով պետք է անցնի, ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ և իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից:

2. Ցույց տալ ազգային–ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ և քաջարի զավակների անձնազոհ սխրանքները:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:

4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը:

5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները

6. Բացահայտել պատմական ճշմարտություն, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:

7. Դաստիրակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն:

8. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական ինքնուրույնություն, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները»:{3,51}

Ելնելով այս ամենից կարող ենք եզրահանգել , որ անկախ նրանից հայոց պատմության դասաժամերին դասի , որ տիպին ենք անդրադառնում ՝ համակցված, թե նոր նյութի ուսումնասիրման , արժեքայի համակարգի ձևավորումը պետք է լինի ուսուցիչների ուշադրության կենտրոնում:

Պատմության դասավանդման համար առաջարկվող մեթոդներ, հնարներ և վարժություններ

Պատմության դասերը չի կարելի կազմակերպել և անցկացնել առանց ուսուցման մեթոդների: Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը:

Պատմության դասավանդման մեթոդիկայում տարածված են տարբեր մեթոդներ: Բաբասկին անդրադառնալով պատմության դասավանդման մեթոդիկային առանձնացնում է հետևյալ մեթոդները.

« . Խոսքային մեթոդները,

.Զննական մեթոդները,

.Գործնական մեթոդները,

.Տրամաբանական մեթոդները

.Ճանաչողական-ստեղծագործական մեթոդները

. Ինտերակտիվ-կառուցողական մեթոդները

.Համագործակցայինուսուցման մեթոդները

.Քննադատական մտածողության մեթոդները

.Խմբային աշխատանքի մեթոդները

.Ինքնուրույն աշխատանքի մեթոդները և այլն » {1,83 }:

Բնականաբար ուսուցիչը միանգամից մի դասի ժամանակ չի կարող օգտագործել այս բազմազան մեթոդներ : Նա պետք է յուրաքանչյուր դասի համար կատարի ուսուցման մեթոդների ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրությունը պետք է կատարվի խնդիրներին համապատասխան, որոնք լուծվում են դասի տվյալ փուլում: Այսպես, եթե Պետական կառավարման համակարգը դասի տվյալ փուլում հիմնական խնդիրը գիտելիքների հաղորդումը և նյութի ընկալումն է սովորողների կողմից , ապա ուսուցիչը կիրառում է խոսքային զննական մեթոդները , մեկնաբանում է երևույթները, պետական մարմինների առաջացումը, յուրաքանչյուր գործակալությունների գործառույթները, բացատրում անծանոթ բառերը: Եթե ասովորողներ լավ չեն ընկալում նյութը , բերվում են լրացուցիչ փաստարկներ: Եթե դասի հիմնական խնդիրը պատրաստի

գիտելիքների յուրացումն է , ապա ուսուցիչը կիրառում է պռոբլեմային շարադրանքի մեթոդը:Ուսուցիչն ինքն է առաջ քաշում հիմնահարցը և ինքն էլ լուծում է: Սովորողները հետևում են ուսուցչի խոսքին , մասնակցում պռոբլեմի լուծմանը:

Կամ եթե դասի տվյալ փուլի հիմնական խնդիրը սովորողների ինքնուրույն կամ ստեղծագործական մտածողության զարգացումն է , ապա կարելի է կիրառել էվրիստիկ զրույցի կամ ինտերակտիվ ուսուցման մեթոդը : Էվրիստիկ զրույցի կիրառումը ավելի կհեշտացնի և կպարզեցնի գործնական խնդիրների լուծումը: Զրույցի ժամանակ օգտագործվում են այնպիսի հարցեր, որոնք բացահայտում են պատմական դեպքեր և երևույթներ: Առաջարկված զրույցի շուրջ տեղի է ունենում մտքերի փոխանակություն՝ հնչում են տարբեր կարծիքներ և վերջում կատարվում է ընդհանուր վերլուծություն :

Ս.Սարուխանյանը անդրադառնալով էվրիստիկ ուսուցմանը գրում է « Տերմինը առաջին անգամ գործածվել է 3-րդ դարի հույն մաթեմատիկոս Պապ Ալեքսանդրացու կողմից՝ որպես ճանաչողության մեթոդների խումբ,որոնք տարբերվում են զուտ տրամաբանական մեթոդներից: Առավել ընդունված է էվրիկա տերմինը վերագրել Արքիմեդին՝կապված հիդրոստատիկայի հիմնական օրենքի հայտնմաբերման հետ: Ուսուցման այս մեթոդի համար նախատիպ է հանդիսացել Սոկրատեսի՝ ուսուցման հարց և պատասխանի մեթոդը» :{5,69} Այսինքն այս ուսուցման ձևի նպատակն է օգնել սովորողին՝ սահմանելու սեփական կրթության իմաստը և բովանդակությունը:

Դասի կոնկրետ փուլում հիմնական խնդրի լուծման գործում վճռական դեր խաղացող մեթոդը կոչվում է գլխավոր մեթոդ: Սակայն դասի տվյալ փուլի հիմնական խնդրից բացի, կան նաև այլ խնդիրներ , որոնք լուծվում են օգնող մեթոդների միջոցով:

Անդրադառնանք պատմության դասաժամերին կիրառվող ևս մեկ մեթոդի:

Պրիզմա մեթադի կրառումը շատ ժամանակ չի տանի դասաժամից :Մեթոդը նպատակահարմար է կիրառել դասի խթանման փուլում, բայց պատմության դասաժամերին մեթոդն ավելի արդյունավետ է աշխատում նոր նյութի ամփոփման, անդրադարձի կամ հաջորդ դասին հին նոր նյութի ամփոփման ժամանակ:

Պատմության դասաժամերին կիրառվող մեթոդներից է Տաճը աղյուսակը:Աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի երկու հակադիր կողմերը համեմատելու համար, ներակայցնելու որևէ երևույթի դրական ու բացասական կողմերը: Օրինակ՝, եթե դասընթացի ժամանակ ուսումնասիրում ենք « Տարածքային հիմնախնդիրները 1921թվականին» , ապա այս դասի ժամանակ կարող ենք համեմատել Մոսկավայի և Կարսի պայմանագրերը, ներկայացնելով պայմանագրերի դրական և բացասկան կողմերը հայ ժողովրդի համար:

Աշակերտների տրմաբանական մտածողության զարգացմանը նպաստող մեթոդ է նաև նոր նյութի հաղորդման ժամանակ կիրառվող կանխատեսման մեթոդը: Նոր նյութի հաղորդման խթանման փուլում կարելի է դիմել հասկացությունների քարտեզագրման:Այս մեթոդը ապահովում է աշակերտների ակտիվությունը:Իմաստի ընկալման փուլում արդյունավետ մեթոդներ են փոխադարձ ուսուցման, ուղղորդված ընթերցանության,խճանկարի մեթոդները: Շատ կարևոր է նաև քննարկումը, բանավեճը , համեմատությունը, հակադրու-թյունը:Գնահատվող բանավեճը նման է խճանկարի, որի յուրաքանչյուր մասնիկ ամբողջի բաժանելի մասն է: Ոչ մի աշակերտ չի կարող գերիշխել բանավեճում, քանի որ ցանկացած ելույթի համար ժամանակը խիստ սահմանափակ է: Գնահատվող բանավեճի ժամանակ մասնակիցները ձգտում են բանավեճին ներգրավել բոլորին՝ ամեն մեկը ձգտում է հայտնել իրենց կարծիքն ու ունեցած տեղեկությունը:

Ընթացքը. բանավեճի 6-8 մասնակիցներ շրջանաձև նստում են դասարանի կենտրոնում, իսկ մյուսները ուսուցչի հետ միասին տեղավորվում են նրանց շուրջը և լսում: Ուսուցիչը միավորներ է տալիս մասնակիցներից յուրաքանչյուրին բանավեճում ներդրման համար: Բանավեճը տևում է 8-20 րոպե՝ կախված թեմայից և սովորողների տարիքից: Թեմայից չշեղվելու համար բանավեճի մասնակիցներն առաջնորդվում են նախապես կազմված պլանով: Ա. Ղուկասյանը անդրադառնալով գնահատվող մեթոդին գրում է. « բանավեճի ընթացքում վարքագծի ցանկացած տեսակ արժանանում է խրախուսական կամ տուգանային միավորների, որոնք գրանցվում են գնահատման թերթիկում:

Ուսուցիչը խրախուսական միավորներ է տալիս՝

1. քննարկվող հիմնահարցի նկատմամբ դիրքորոշում ունենալու համար,

2. փաստերի վրա հիմնված կամ ուսումնասիրության ընթացքում ձեռքբերված տեղեկատվության հհամար,

3. թեմային հավատարիմ մնալու համար,

4. մեկ ուրիշ աշակերտի՝ բանավեճի մեջ ներգրավվելու համար

Հատկապես վերջին կետը ապահովում է մասնակիցների ակտիվությունը: Աշակերտները կարող են խրախուսական միավորներ ստանալ նաև ճշգրտող հարցերի և բանավեճը առաջ տանելու համար: Խրախուսական միավորներ կարելի է տալ նաև համեմատություն անցկացնելու համար, ինչը վկայում է մտածողության բարձր մակարդակի մասին և նպաստում բանավեճի զարգացմանը»{ 3,52}:

Տուգանային միավորների օգնությամբ ուսուցիչը կարող է կարգուկանոն պահպանել: Ուսուցիչը հաղորդում է նրանց, որ բանավեճի սկզբից սկսած՝ նրանք կարող են տուգանային միավորներ ստանալ առանց լրացուցիչ զգուշացման: Բանավեճի ավարտից հետո ուսուցիչը հաշվում է աշակերտների ստացած միավորները: Բանավեճում ունեցած ցանկացած ներդրման համար աշակերտը միավորներ է ստանում միայն մի գնահատման թերթիկում, նույնիսկ եթե անգիր արտասանում է 3 փաստ միաժամանակ, ստանում է միայն 2 միավոր: Բացառություն է կազմում միայն լրացուցիչ խրախուսանքը մեկ ուրիշին բանավեճի մեջ ներգրավելու համար: Քանի որ ուսուցիչը չպետք է ընդհատի բանավեճի ընթացքը, ցանկալի է, որ քննարկման ընթացքում իր համար որոշ նշումներ անի և բացատրություն տա բանավեճի ավարտից հետո:

Փաստորեն, ամեն մի կոնկրետ իրադրության մեջ կատարելով մեթոդների համապատասխան ընտրություն և դրանց փոխկապակցում, պատմության ուսուցիչն ինքն է հայտնագործում իր մեթոդը և ազատ ու անկաշկանդ կիրառում այն:Ուսուցչի ընտրած մեթոդների արդյունավետության ընդհանուր չափանիշը սովորողների կրթության, դաստիրակության և զարգացման գործում այդ մեթոդների կիրառման շնորհիվ ձեռք բերված վերջնական արդյունքներն են և դրանց համապատասխանությունն է այն խնդիրներին, որոնք պետք է լուծել ուսուցման ընթացքում սովորողների ռեալ ուսումնական հնարավորություններին համապատասխա

Եզրակացություն

Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է եկել անհիշելի ժամանակներից և անցել է զարգացման բարդ և դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: Գալով հազարամյակների խորքից՝ հայ ժողովուրդը կերտել է կորուստներով և ձեռքբերումներով հարուստ պատմություն և մշակույթ: Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների և դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչ մեր օրերը և ոտք է դնում արդեն նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր պետականությամբ և այն պաշտպանելու ու զորեղացնելու վճռականությամբ:

Այսպիսով ՝ հետազոտական աշխատանքի ավարտական փուլում եկանք այն համոզմանը, որ մեթոդը գրծընթաց է և որպես գործընթաց ՝ այն վերածվում է գիտական բացատրության : Հայոց պատմություն առարկայի դասավանդման ժամանակ մեթոդների և հնարների ընտրությունը այնպես պետք է կազամակերպվի, որպեսզի սովողները հիմնարար գիտելիքներ ձեռք բերեն Հայաստանի, հայկական քաղաքակրթության ստեղծած արժեքների մասին, գիտական պատկերացում ունենան հայոց պատմության հիմնախնդիրների վերաբերյալ:

Հետազոտական աշխատանքի ուսումնասիրման ավարտին եկանք նաև այն համոզման , որ Ազգային արժեհամակարգի դերը և դիրքը չափազանց մեծ է հայոց պատմության դասաժամերին: Հայոց պատմության դասավանդման հիմքը և գլխավոր իմաստ պետք է լինի ազգային արժեհամակարգի ձևավորումը : Քանի որ հայոց պատմության դասաժամերին է ձևավորվում ազգային մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումն ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող ազգային արժեհամակարգը կրող անձ և քաղաքացի: Ըստ իս ազգային արժեհամակարգի մշակման համար անհրաժեշտ է վերադառնալ պատմական անցյալ և այնտեղից «բերել» կերպարներ,

երևույթներ գաղափարներ, որոնք նոր հասարակության համար կհանդիսանան ինքնաճանաչման, ինքնադրսևորման հարատև ազդակներ:

Գրականության ցանկ

1 Բաբանսկի Յու. Աշակերտների դաստիրակությունը կոմպլեքսային մոտեցում. Երևան, էջ 112:

2. Գևորգյան Ա., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիրակության գործընթացում. Երևան,2002թ, էջ 176:

3 . Ղուկասյան Ա. Հայոց պատմությունը 6-7-րդ դասարաններում: Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2007. էջ 88:

4.Սարգսյան Ա., Մալոյան Ա. Հայոց պատմություն 10-12-րդ դասարաններում. Երևան 2009թ ,էջ 95:

5 . Սարուխանյան Ս. Բառարանատիպ տեղեկատու, Երևան, 2011թ էջ 252: